Կովկասի փոխարքայութեան սահմաններում Հայ-Լուսաւորչական եկեղեցու գոյից կառավարութեան ժամանակաւոր կանոններ:

Ա. Եկեղեցական գոյքերի վերաբերեալ կանոններ.

1. Հայ-Լուսաւորչական եկեղեցիների գոյից կառավարութիւնը յանձնւում է ծխական հոգաբարձութեանց, որոնք բաղկացած պէտք է լինին եկեղեցու երեցփոխանից և 2—4 անդամից հաւասար իրաւունքներով, որոնց ընտրում են ծխականներն իրենց միջից եռամեայ ժամանակով:

2. Եկեղեցական հոգաբարձուների ընտրութիւնը կատարւում է ծխականների ընդհանուր ժողովում ներկայ եղողների ձայնից առաւելութեամբ և հաստատւում թեմական առաջնորդից:

3. Ծխականների ընդհանուր ժողովում ձայնի իրաւունք ունին այն բոլոր այր մարդիկ, որոնք առնուազն երկու տարի նոյն եկեղեցու ծուխ են, 25 տարեկան են և օրինական իրաւունք ունին հասարակական պարտականութիւններ կատարելու:

4. Ծխական հոգաբարձուների պարտականութիւնն է օրինաւոր թոյլտուութեամբ բանալու ծխի համար դպրոցներ, հիւանդանոցներ, աղքատանոցներ, ապաստարաններ և այլ բարեգործական հաստատութիւններ:

5. Եթէ եկեղեցական եկամուտները բաւական չլինին ծխի բոլոր կարիքներին բաւարարութիւն տալու, հոգաբարձութիւնը կազմում է ծխականներից միանուագ կամ պարբերաբար դրամով կամ բնական որոշ տուրք ժողովելու նախագիծ: Այդ նախագիծն առաջարկւում է ծխական ընդհանուր ժողովի քննութեան և օրինաւոր կերպով ընդունելուց ու համախօսական կազմելուց յետոյ՝ պարտաւոր է դառնում համաձայնութիւն տուողների համար:

6. Հոգաբարձությունը կազմում է իւրաքանչիւր տարուայ եկեմտից նախահաշիւ, որը առաջարկւում ծխական ժողովի հաւանութեան և հաստատւում է թեմական առաջնորդից։

7. Ծխական հոգաբարձուները պարտաւոր են հաշիւներկայացնել թեմական առաջնորդին և թէ ծխական ընդհանուր ժողովին, որոնք այդ հաշիւների վերստուգութեան համար ընտրում են վերաստուգող յանձնաժողով։

Ա. Հոգեւոր դպրանոցներին պատկանող գոյից կառավարութեան մասին։

1. Հոգեւոր դպրանոցների գոյքը (համաձայն 1896 թուին հրատարակուած օրէնքաց XI հատորի I մասի 1206 յօդուածի) կառավարում են 12 հոգուց բաղկացած հոգաբարձական առանձին խորհուրդներ, որոնց նախագահում է առաջնորդը։

2. Հոգաբարձական խորհրդի անդամների ընտրութեան համար թեմական առաջնորդի, կամ նրա կողմից յատկապէս նշանակուած անձի նախագահութեամբ հրաւիրւում է թեմի ընտրողների ժողով՝ դպրանոց դանուած քաղաքի իւրաքանչիւր եկեղեցուց ծխական ընդհանուր ժողովի ձայնից մեծամասնութեամբ ընտրուած երկու հոգի, թեմի միւս քաղաքների եկեղեցիներից իւրաքանչիւրի կողմից նոյն ձևով ընտրուած մի հոգի, գիւղական շրջաններից իւրաքանչիւր գործակալութիւնից մի մի հոգի, որոնք պէտք է ընտրուեն գիւղական եկեղեցիների ներկայացուցիչների կողմից։ Հոգաբարձութեան անդամներն ընտրւում են 4 տարի ժամանակով։

3. Հոգաբարձական խորհրդի անդամներն իրենց պաշտօնում հաստատւում են Ամենայն Հայոց Կաթուղիկոսի կողմից։

4. Հոգաբարձական կազմի կէսը երկու տարուց յե-

տոյ թողնում է իւր պաշտօնը՝ առաջին խորհրդի կէսը վիճակով, իսկ այնուհետև հերթով։

5. Թեմի ընտրողների ժողովը հոգաբարձական ժողովի իրաւասութեան շրջանի համար ընտրում է վերատեսուչ յանձնաժողով, որի եզրակացութիւնը հաղորդւում է Ս. Էջմիածնի Սինոդին։

6. Կանխապէս կազմած նախահաշիւը, ինչպէս և հոգաբարձական ժողովի հաշիւը հաստատւում է Ս. Էջմիածնի Սինոդի կողմից։

Գ. Վանքապատկան կալուածների մասին։

1. Վանքապատկան գոյից կառավարութիւնը յանձնւում է վանքական իշխանութեան։

2. Վանքապատկան գոյքի կանոնաւոր կառավարութեան վրայ հսկելու համար թեմական առաջնորդները կարող են հրաւիրել վանական վարչութեանց օժանդակ և աշխարհական անձինք։

Իսկականը ստորագրած է.

Սատաս Սեկրետար Բարոն Նոլդէ.

Ուղիղ է Ն. Կ. Մ. Կովկասի. փոխարքայի դիւանատան փոխ դիւանապետի փոխարէն Ն. Նիկոլսկի.

Համեմատեց դիւանատան գործաւար Վ. Վալկեւիչ։